

Ա.Ս. ՊՈՒԶՄԻՆ

ՅԵՐԵՐ ՀԵՐՅԱԹ

3

891.71

486

7-90

Muzhik v. 21.

Знакът е от 1937

1/2

29


1/2


351


26

1/2

240







А.С.Пушкин

Три сказки



ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО

ЕРЕВАН

1937

891.71

7-90

Ա.Ս. Պողոսյան

ՄԱՐԿԵԶ Է 1961 թ.

ՅԵՐԵՔ ՀԵՔՅԱԹ

486
A $\frac{1}{3539}$




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937




11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100





ՀԵՔՅԱԹ ՍԱԼԹԱՆ ԱՐԲԱՅԻՆՐԱՎՈՐԿԻ ՓԱ-
ՌԱՊԱՆԾ ՅԵՎ ՀԶՈՐ ԴՅՈՒՅԱԶՆ ԻՇԽԱՆ ԴՎԻԴՈՆ
ՍԱԼԹԱՆԻԶԻ ՅԵՎ ԴԵՂԵՅԿՈՒՀԻ ԱՐԲԱՅԱԴՈՒՍԵՐ
ԿԱՐԱՊԻ ՄԱՍԻՆ

1831



Յերեք աղջիկ, յերեք քույրեր,
 Մանում եյին մինչ ուշ գիշեր:
 — Թե թագուհի դառնամ հանկարծ,
 Աղջիկներից մեկը ասաց.
 — Յես կտարքեմ վողջ աշխարհում
 Ուրախ մի քեֆ, լավ կերուխում:
 — Թե թագուհի դառնամ հանկարծ,
 Մյուս քույրիկը նրա ասաց.
 — Վողջ աշխարհի համար մենակ,
 Յես կըզործեմ քաթան բարակ:
 — Թե թագուհի դառնամ հանկարծ,
 Այն յերրորդն ալապես ասաց.
 — Հայր արքայի համար մի որ
 Յես կըծնեմ հսկա հզոր:

Հենց իր խոսքը նա ավարտեց,
 Դուռը կամաց հռուաց, բացվեց,
 Սենյակ մտավ արքան զորեղ,
 Այն յերկրի տերը տհեղ:
 Խոսակցության նա ընթացքում
 Յանկապատին մոտ ե լինում.
 Յեւ խոսքերը այն վերջինի
 Նրա սրտին դուռ են գալի:
 — Վողջո՛ւյն, — ասավ, — իմ սիրունիկ,
 Յեկ, թագուհի յեղիւր, աղջիկ,

Յեւ ինձ համար ծնիր հակա—
 Սեղտեմբերի վերջը վոր դա:
 Իսկ դուք, քույրեր, աղափնյակներ,
 Թողեք հիմա սենյակը ձեր,
 Յերկուսովը ինձ հեա յեկեք,
 Ինձ և քրոջը ձեր հետեւք:
 Թող այս մեկը ջուհակուհի,
 Յեւ խոհարար մշուսը լինի—
 Բոլորն այսպեա և հայր արքան
 Դեպի պալատ ճամբա ընկան:
 Արքան յերկար չպատրաստվեց,
 Յերեկոյան դեմ պսակվեց.
 Նստեց արքան աղնիւ վեֆին,
 Հետն եւ ջահել իր թագուհին:
 Յեւ հյուրերն աղնիւ նրա
 Մահճակալին փոստկրյա
 Պառկեցրեցին ջահելներին,
 Հետո մենակ նրանց թողին:
 Խոհարարը խոհանոցում,
 Ջուհակուհին լաց են լինում.
 Կատաղում են և նախանձում
 Թագավորի պերճ ամուսնուն:
 Իսկ թագուհին ջահել հալով,
 Իր խոստումը կատարելով,
 Նույն գիշերն և հենց ծանրանում:

Պատերազմ եր այն կողմերում:
 Սալթան արքան հրաժեշտ տվեց:
 Ռաշ նժույգին հետո նստեց,
 Յեւ պատվիրեց իր ամուսնուն,

Հանուն սիրո՛ւ լինել խոհուն: ✓
Մինչդեռ աքքան հեռուներում
Քաջ կովում եր, պատերազմում,
Կինը ծնեց չքնաղ տղան,
Մի արշին եր բոյը նրա,
Իսկ թագուհին նրա կողքին,
Արծվի պէս, պաշտպան ձագին,
Նա կանչում է մի սուրհանդակ,
Հորը գրում ուրախ նամակ:
Խոհարարը, ջուլհակուհին,
Կինարմատը՝ կին - խնամին
Վնաս հասցնել վորոշեցին,
Սուրհանդակին բռնել տվին,
Մի ուրիշին ուղարկեցին,
Սյապես առել պատվիրեցին.
— «Վոր ծնել է կինդ ահա,
Վոչ աղջիկ է, վոչ եւ տղա,
Վոչ եւ մի դուռ, կամ թե մկնիկ,
Մի անձանոթ դադան փոքրիկ»:

Յերը հայր արքան վողջը լսեց,
Սուրհանդակը ինչ հաղորդեց,
Խիստ զայրացավ, գոռաց ուժգին,
Ուղեց կախել սուրհանդակին,
Բայց փափկելով այս մեկ անգամ,
Սուրհանդակին տվաւ հրաման,—
«Սպասեցեք դուք իմ դարձին,—
Ճշմարտությամբ արվող դատին»:

Սուրհանդակը ճամբա ընկավ,
 Յեւ վերջապես պալատ հասավ:
 Սոհաբարը, ջուլհակուհին,
 Կինարմատը՝ կին—խնամին
 Թալանելու հրաման տվին
 Նրան մի լավ հարեցրեցին.
 Իսկ պարկի մեջ նրա գատարկ՝
 Դրին ծածուկ ուրիշ նաճակ:
 Յեւ նուջն որը հարբած ծառան
 Մի այսպիսի բերեց հրաման.
 —«Հրամայում եմ իշխաններին,
 Վոր չուշացնեն, ժամանակին,
 Յեւ մանկանը, և թաղուհուն—
 Ծածուկ դցեն ծովն անհուն»:
 Դե ի՞նչ արած... Ափսոսացին
 Իշխանները թաղավորին.
 Ափսոսալով և թաղուհուն՝
 Ննջարան են խմբով մտնում,
 Կամքը հայտնում թաղավորի
 Յեւ վիճակը իր սոսկալի:
 Հենց հրամանն ընթերցեցին,
 Յեւ թաղուհուն, և տղային,
 Տակառի մեջ նստեցրեցին,
 Այն ձյութեցին, գլորեցին,
 Մինչ ուկիանը հասցրին անհայտ,
 Չե՛ Սալթանի հրամանն եր աչգ:

Կապույտ յերկնում աստղեր շողուն,
 Կապույտ ծովում ջուրն է ծփում,
 Ամպն է անցնում բիլ յերկնքում,

Յեվ տակաւն ե ծովում լողում:
 Մեջը, ինչպես այրի մի կին,
 Լաց ե լինում խեղճ թաղունին,
 Ուր մանուկն ե իր մեծանում,
 Ու ժամերով հասակ առնում:
 Որն անցնում ե, մայրն ե վողբում,
 Յեվ ալիքն ե վորդին քշում—
 —Երու ալիք լմ, ժիր ալիք,
 Դու ազատ ես ման գալի,
 Յեվ ճողփում ես դու անվերջ,
 Բարն ես սրում ծովի մեջ,
 Դու ափերը հեղեղող,
 Նալն ես փրկում խորտակվող,
 Մի կործանի մեր հողին,
 Մեզ հասցրու ցամաքին:
 Յեվ ալիքը հնադանդվեց,
 Իսկուհն ափը դուրս հանեց
 Նա տակաւը շատ թեթեւ,
 Հետո կաթնաց փախաւ յետ:
 Մայր ու մանուկ փրկվեցին,
 Հողի բուրմունք գլացին:
 Բայց տակաւից ձվ կհաներ,
 Պեաք եր ասածուն ապավինել,
 Վրաքի կանգնեց փոքրիկ վարդին,
 Գլխով հենվեց առաստաղին,
 Իր ութերը մի քիչ լարեց,
 —Պատուհան ե մեզ պետք,—ասեց,
 Փայտե տակը փշրեց թեթեւ
 Յեվ դուրս յեկաւ դեպի վերև:
 Յեվ ազատված, մայրն ու տղան

Շուտով մի թուճը և դաշտ տեսան,
Շուրջը ծովն երբ ըլլ անձանաչ,
Թմբի վրա կաղնի կանաչ:
Յեւ մտածեց աղան, — հարմար
Մի ընթրիք և պետք մեկ համար —
Կաղնուց մի ճյուղ սովեց աճանեղ,
Ծոնեց, շինեց նա պիրկ աղեղ,
Մետաքս յերկղ խաչեց հանեց
Յեւ աղեղի վրա լարեց.
Յեղեգ կտրեց ձիւ ու յերկար,
Շինեց թեթև նետ սրածալը.
Գնաց հասավ հովտի ծայրին,
Վորս փնտռելու ծովի ավին:

Հենց վոր ծովին նա մոտեցավ,
Տնքոց լսեց մի սրտացավ,
Վատ եր գործը, թվաց նրան,
Անհանգիստ լեր ծովի վրա,
Մի կարապ եր լողում ցածում,
Յինը վրան պտույտ գործում.
Ճողփում եր աչն խեղճը ջրում
Շուրջը իրա վողջ պղտորում.
Յին ճանկերն եր իր արձակել
Յեւ կտուցն եր սրել, բացել:
Մեկ եւ նետը յերգեց, անցավ,
Շաչեց, ցինի վզին կալավ
Յին ծովի մեջ արյուն թափեց,
Իր աղեղը աղան գցեց.
Տեսավ, ծովում ցինն և խեղդվում,
Թռչունի պես նա չի տնքում,

Ու կարապն ե մոտից լողում,
Յինին կողքից կացահարում,
Արագացնում վերջը նրա—
Ծովում սուզում թևով չրա
Արքայորդուն դիմում խոսում
Յեւ մարդկային լեզվով տառաւ.—
—Արքայորդի, դու իմ փրկիչ,
Դու իմ զորեղ, քաջ աղաւթիչ,
Ո, մի ախրի աչն պատճառով,
Վոր չես ուտի յերեք դու որ,
Վեր քո նետը ծովում մնաց,
Յավալի չե, բայց ինչ տրած.
Կլարձատրեմ բարությունով,
Ծառայութեամբ չես շատ շուտով:
Կարապ չեր, վոր դու փրկեցիր,
Մի աղջկան կլանք տվեցիր,
Սպանեցիր վոչ թե ցինի,
Այլ մի վնուկ չար կախարդի:
Չեմ մոռանա յես քեզ յերեք,
Ինձ կըզտնես ամենուրեք,
Եւ մի ախրի, դու չես դարձիր
Յեւ անուշիկ քուն վայելիր:

Թռավ գնաց կարապը աչն.
Յեւ թագուհին ու իր տղան
Վորոշեցին քաղցած պառկել.
Որն եր արդեն վաղուց անցել:
Արքայորդին դարձնեց քնից,
Յերազները քշեց գլխից,
Յեւ զարմացած տեսավ հանկարծ,

Հսկա քաղաք գեմը կանգնած,
Պարիսպներով ատամնավոր:
Փայլուն, շողուն դմբեթներով
Պատի յետև յեկեղեցի,
Յեվ սուրբ վանքեր շատ գեղեցիկ:
Նա զարթեցրեց մորը քնից,
Սա ախ քաշեց.— ինչ կլինի,—
Ասավ տղան,— տեսնում եմ յես,
Զվարճանում ե կարապը հեզ:—
Մայր ու տղա քաղաք մտան,
Հենց պարսպի յետև անցան,
Լսվեց ահանջ ծակող զողանջ,
Ամեն կողմից զանգ ե շառաչ:
Ժողովուրդն ե գեմից յիջնում,
Յեվ աստծուն փառաբանում:
Բազմած վոսիկ պերճ կառքերում
Արքունիքն ե զիմավորում,
Մեծարում են պեքայսրիուն,
Թագադրում, գլխին դնում,
Իշխանական զլխարկ նրան,
Տեր ընդունում իրենց վրան:
Մայրաքաղաք մտած անձամբ,
Մայր—թագունու թույլտվությամբ,
Նա սկսեց կառավարել,
Իշխան Գլխոն անուն կրել:
Ըզրոսնում ե քամին ծովում
Յեվ նավակն ե առաջ քշում,
Վոր վազում ե ջրով չերեր,
Պարզած ճեքմակ առազաստներ:
Նավորդներն են շատ զարմանում,

Յեւ նաւակի վրա խմբւում,
 Կղզու վրա իրենց ծանոթ
 Հրաշք տեսնում նոր անծանոթ,
 Վոսկե դմբեթ քաղաք մի նոր,
 Նաւահանգիստ մեծ, անսովոր.
 Թնդանոթն ե սկսել կրակել,
 Հրամայում ե նաւին կանգնել:
 Յեւ հյուրերը կանգ են առնում,
 Այն Գվիդոնն ե նրանց կանչում,
 Պատվիրում ե հյուրասիրել,
 Հետո իրեն պատասխանել.—
 Ի՞նչ եք հյուրեր իմ, գուք ծախում,
 Դեպի ո՞ւր եք հիմա լողում:—
 Նափորդները ի պատասխան.
 — Մենք աշխարհը անցանք, տեսանք,
 Յեւ ծախեցինք սամուրենի,
 Յեւ սևագորշ մորթ աղվեսի.
 Ժամանակն ե մեր լրացել,
 Դեպ արեւիք կուղենք դիմել,
 Կղզու մոտով այն Բուլյանի,
 Մինչ լիւրկիրը քաջ Սալթանի:
 Ու իշխանը ասաց.— Հիմա,
 Ձեզ, պարոնայք, բարի ճամբա,
 Ովկիանոսով, կապույտ ծովով
 Մինչ Սալթանը ձեր փառավոր.
 Բարե տարեք ինձնից նրան:—
 Յերբ հյուրերը ճամբա ընկան,
 Քաջ Գվիդոնը կանգնած ափին,
 Տխուր նայեց իրանց վաղճին:
 Հանկարծ տեսավ, հոսող ջրում

Այն կարապէն և ճերմակ լողում.
 — Բարե՛, իշխա՛ն, չքնաղ, ջահել,
 Ինչո՞ւ դեմքիդ ամպ և իջել,
 Յեւ ինչո՞ւ յեա տխուր այդպես, —
 Նա Գլխո՞նին հարցրեց այսպես:
 Իսկ իշխանը պատասխանեց.
 — Սիրտս ցաւ և կրծում մի մեծ,
 Նա ճնշում և ինձ, ջահելին,
 Կուղեմ տեսնել հորս անդին: —
 Իսկ կարապը: — Ահա թե ի՞նչ,
 Թռի՞ր ծովով խաղաղ և ջինջ,
 Դու աչն նավին հասիր, նստիր,
 Դե, իմ իշխան, մոծակ դարձիր. —
 Ու թեւերով թափահարեց,
 Շուրջը ջուրը նա շաղ տվեց,
 Յեւ իշխանին գլխից մինչ վոտ
 Յողեց թևով իրեն ջրոտ:
 Ինչպես մի կեստ նա փոքրացաւ
 Ու իշխանը մոծակ դարձաւ.
 Ծովով թռաւ ծովծվալով,
 Նավին հասաւ նա շատ շուտով,
 Վրան իջաւ և կամացուկ
 Խոր թագնովեց ճեղքում ծածուկ:
 Աղմկում և ուրախ քամին,
 Յեւ նավակն և վաղում կրկին,
 Կղզու մոտով աչն Բույանի,
 Դեպ յերկիրը քաջ Սալթանի:
 Յեւ յերկիրը աչն չերազած՝
 Հեռուներում պարզ չերեաց:
 Ափը իջան հյուրերն աչն,

Հրավիրում ե նրանց արքան:
Մինչև պալատ նրանց հետքով
Մեր կտրիճն ե թռչում ողով,
Տեսավ, զուգված վռակով փայլուն,
Սալթան արքան իր պալատում,
Գահի վրա, թագը գլխին,
Տխուր մի միտք իր ճակատին.
Խոհարարն ել, ջուհակուհին,
Կինարմատը՝ կին—խնամին,
Թագավորի կողքին նստել,
Հայացքներն են նրան հառել:
Յեւ հյուրասեր Սալթան արքան
Հյուրերի հետ նստեց սեղան,
Հարցրեց.— Հյուրեր, իմ պարոնայք,
Այդ վճռտեղից, ի՞նչպես յեկաք:
Ծովի ալն կողմ, լճով ե, թե վանտ:
Յեւ ի՞նչ հրաշք տեսաք անհայտ—
Նախորդները ի պատասխան.
— Մենք աշխարհի շուրջը անցանք,
Ծովի ալն կողմ վատ չե, տեսանք,
Իսկ աշխարհում նոր մի հրաշք
Կար գահավեժ կղզի ծովում,
Վոչ-վոք վրան չեք բնակվում,
Տափաստան եր նա ամայի,
Յեւ մենավոր վրան կաղնի.
Բայց կանգնած ե հիմա ալնտեղ
Նոր պալատով քաղաք ահեղ,
Վոսկեգմբեթ յեկեղեցի,
Յեւ ալգիններ շատ գեղեցիկ,
Ուր Գվիդոնն ե տերը ջահել,

Նա բարեւ եւ քեզ ուղարկելի:
 Սալթան արքան շատ զարմացաւ,
 — Թեւ կենդանի մնամ,—ասաւ,
 Չքնաղ կղզին յիս կայցելեմ
 Յեւ Քվիլոնին հյուր կլինեմ:—
 Խոհարարը, ջուհակուհին,
 Կինարմատը՝ կին—խնամին,
 Չեն կամենում նրան թողնել
 Չքնաղ կղզին այն ալցելել:—
 —Ի՞նչ հրաշք եւ դա, վսր մի մեծ,—
 Խոհարարը ալսպէս ասեց,—
 Աչքով արեց նա խորամանկ.
 —Ծովի ափին կանգնած քաղաք:
 Գիտցեք, ինչը դատարկ բան չի.
 Մի անտառում կա չեղենի,
 Տակը սկզուով չերդ եւ ասում,
 Յեւ կաղին եւ անվերջ կրծում:
 Այդ կաղին եւ վո՛չ հասարակ,
 Վողջ կճեպը՝ վոսկի բարակ,
 Իսկ միջուկը դմբուխտ անդին,
 Ա՛յ թե հրաշք կասեն ինչին:
 Չարմանում եւ Սալթան արքան:
 Կատաղում եւ մոծակն ա՛յն,
 Յեւ մորաքրոջ նստում աչքին,
 Յեւ աջ աչքը խայթում կարգին:
 Խոհարարը գու՛յն եւ գցում,
 Ուշաթափում եւ կուրանում.
 Քուլը, խնամի եւ ծառաներ
 Մոծակին են ուղում բռնել,
 —Ա՛յ անիծված, անպետք մեղի,

Հասեք, բռնեք՝ նրան այստեղ: —
 Իսկ նա թռավ պատու հանից,
 Իր յերկիրը հասավ նորից:
 Ու իշխանը ծովի ամին
 Ման ե գալիս տխուր կրկին:
 Հանկարծ տեսավ հոսող ջրում
 Այն կարապն ե ճեմակ լողում:
 — Բարե, իշխան, չքնաղ ջահել,
 Դեմքիդ ինչո՞ւ ամպ ե իջել,
 Յեւ ինչո՞ւ յես տխուր այդպես, —
 Նա Գլիղոնին հարցրեց այսպես:
 Ու իշխանը պատասխանեց.
 — Սիրտս ցավ ե կրծում մի մեծ,
 Այն հրաշքը դարձանալի
 Յես ունենալ կուզենայի. —
 Մի անտառում կա յեղենի,
 Սա հրաշք ե, դատարկ բան չի,
 Սկյուռը տակին յերգ ե ասում,
 Յեւ կաղին ե անվերջ կրծում:
 Այդ կաղին ե վոչ հասարակ,
 Վոզ ի ճեպը — վոսկի բարակ,
 Իսկ միջուկը — զմրուխտ անգին,
 Գուցե մարդիկ սուտ ասացին: —
 Յեւ կարապն ե պատասխանում.
 — Սկյուռի մասին ճիշտ են ասում,
 Այդ հրաշքին ծանոթ եմ յես,
 Բավ ե, իշխան, ինչքան տխրես,
 Յես պատրաստ եմ միշտ ծառայել,
 Քեզ բարեկամ ընդմիշտ լինել: —
 Ու իշխանը քաջալերված,

Տուն ե դառնում ուրախացած:
Բակը մտնում իր ընդարձակ.
Ի՞նչ ե տեսնում:—Յեղենու տակ
Մի սկյուռ ե նստել փոքրիկ
Յեւ կաղին ե կրծում վոսկի,
Միջից անգին զմրուխտ հանում
Յեւ՝ կճեպն ե նա հավաքում,
Կույտեր դարսում ձիատեսակ,
Շվիկոցով յերգում՝ արագ,
Բոլոր աղնիվ մարդկանց առաջ.
— «Դու իմ աչքի, բաղչա կանաչ»:
Քաջ Գվիդոնը շատ զարմացավ.
— Շնորհակալ եմ, — ալսպես ասավ,
— Ա՛յ թե կարապ, կուղեմ, վոր նա,
Ինձ պես մի լավ ուրախանա: —
Յեւ իշխանը սկչւռի համար
Շինել ավեց տուն բլուրեղյա.
Մօտը պահակ նա կանգնեցրեց,
Յեւ գրադրին նա պատվիրեց,
Կաղինները հաշվել անթիվ,
Իրեն ոգուտ, սկյուռին՝ պատիվ:

Ըզրոսնում ե քամին ծովում,
Յեւ նավակն ե առաջ քշում,
Վոր վազում ե ջրով յերեւր,
Բացած ճերմակ առագաստներ:
Անցնում կղզու ամից շատ մօտ,
Մեծ քաղաքի կողքով ծանոթ.
Թնդանոթն ե սկսել կրակել,
Հրամայում ե նավին կանգնել:

Յեվ հյուրերը կանգ են առնում,
 Այն Գվիդոնն է նրանց կանչում,
 Պատվիրում է հյուրասիրել,
 Հետո իրեն պատասխանել:
 — Ի՞նչ եք, հյուրեր իմ, դուք ծախում,
 Դեպի սւր եք հիմա լողում:—
 Նավորդները ի պատասխան.
 — Մեծ աշխարհի շուրջը անցանք,
 Յեվ ծախեցինք մենք նժույգներ,
 Դո՛ն աղնիվ ձի—մատակներ.
 Ժամանակն է մեր լրացել,
 Կուղենք հեռու ճամբա ընկնել,
 Կղզու մոտով այն Բուլյանի,
 Դեպ յերկիրը քաջ Սալթանի:
 Ու իշխանը ասաց,—հիմա,
 Ձեզ պարոնայք, բարի ճամբա,
 Ովկիանոսով, կապույտ ծովով,
 Մինչ Սալթանը ձեր փառավոր.
 Քեզ Գվիդոնը, ասեք, այսոր՝
 Բարեում է Սալթան հղոր:

Գլուխ տալով քաջ իշխանին,
 Նրանք ճամբա ընկան կրկին,
 Իսկ իշխանը ավին է վազում,
 Ուր կարապն է արդեն չողում,
 Յեվ խնդրում է՝—հոգիս նորից
 Դեպ հեռուն է ձգտում անից:—
 Ու կարապը նրան իսկույն
 Ծովի ջրով ցողեց փայլուն:
 Յեվ իշխանը դարձավ մի ճանճ,

Թռալի, գնաց ճամբով ճանաչ,
Ծովով թռալի և յերկնքով,
Նալի ճեղքը մտալ շուտով:

Աղմկում ե ուրախ քամին,
Յեւ նաւակն ե վաղում կրկին,
Կղզու մոտով այն Բուլջանի,
Դեպ յերկիրը քաջ Սալթանի:
Յեւ յերկիրն այն յերազած՝
Հեռուներում պարզ յերեսացի,
Ափը իջան հյուրերն այն,
Հրավիրում ե նրանց արքան.
Մինչև պալատ նրանց հետքով
Մեր կտրիճն ե թռչում ուղով.
Տեսալ, զուգված վոսկով փայլուն,
Սալթան արքան իր պալատում,
Գահի վրա, թագը գլխին,
Տխուր մի միտք իր ճակատին:
Ջուհակունին, կին—խնամին,
Խոհարարը՝ մի աչքանին
Կողքին նստել թագավորի,
Նմանվում են զողոշների:
Յեւ հյուրասեր Սալթան արքան,
Հյուրերի հետ նստեց սեղան,
Հարցրեց.—Հյուրեր, իմ պարոնայք,
Այդ վերտեղից, ի՞նչպես յեկաք,
Ծովի այն կողմ լավ ե, թե՞ վատ,
Յեւ ի՞նչ հրաշք տեսաք անհայտ—
Նավորդները ի պատասխան.
—Մենք աշխարհի շուրջը անցանք,

Վատ չէ, ծովի այն կողմ տեսանք,
 Իսկ աշխարհում, նոր մի հրաշք,
 Ծովում կղզի կա մեն-մենակ,
 Կղզու վրա, մի մեծ քաղաք,
 Վոսկիգմբէթ յիկեղեցի
 Յեւ զլյակներ շատ գեղեցիկ:
 Պալատի դեմ— յեղենու ծառ,
 Տակը— բյուրեղ տնակ պայծառ,
 Մեջը սկզուռ մի ընտանի
 Յեւ սրամիտ, և՛ կենդանի:
 Նա յերգեր և սիրուն յերգում
 Յեւ կաղին և անվերջ կրծում:
 Այդ կաղինը չե հասարակ,
 Վողջ կճեպը— վոսկի բարակ,
 Իսկ միջուկը— զմրուխտ կանաչ,
 Յեւ ծառաներ նրա առաջ՝
 Ծառայում են նրան վաչեր
 Գրագրին են այնտեղ հանձնել,
 Կաղինները հաշվել անգին:
 Մեծարում ե զորքն սկյուռին.
 Կճեպներից դրամ են ձուլում,
 Վոր աշխարհն ե շրջագալում.
 Յեւ զմրուխտն են ածում պահում,
 Աղջիկները մառաններում:
 Այնտեղ, հարուստ կղզու վրա
 Պալատներ են, խրճիթ չկա,
 Ուր Գվիդոնն ե— տերը ջահել,
 Նա բարե և քեզ ուղարկել.—
 Սալթան արքան շատ զարմացավ.
 — Թե կենդանի մնամ,— ասավ,

—Չքնաղ կղզին յեա կայցելեմ,
 Յեւ Ռիդոնին հյուր կլինեմ:—
 Խոհարերը, ջուհակուհին,
 Կինարմատը՝—կին խնամին,
 Չեն կամենում նրան թողնել,
 Չքնաղ կղզին այն այցելել:
 Դադաաղողի ծիծաղելով,
 Ջուհակուհին թսավ,—հրաշքով
 Չես դարմացնի դու մեզ իսկի,
 Սկյուռը քար ե կրծում վոսկի,
 Թափում վոսկին այն շահարեր,
 Ձմրուխտներից դիզում կույտեր,
 Չես դարմացնի դրանով դու մեզ
 Ճմարաություն, թե սուտ ասես:
 Հրաշք կա ուրիշ, դարմանալի,
 Ծովն ե ուռչում փոթորկալի,
 Յեռ ե գալիս, ուժեղ վռնում,
 Դատարկ ափի վրա ցաղկում,
 Տարածվում ե շառաշելով,
 Յեւ մնում ե ափին շուտով,
 Պատյաններով բոցավառվող
 Յերեսուն յերեք կտրիճ քայլող:
 Դյուցազներ են վողջը սիրուն,
 Հսկաներ են ջահել, նախշուն,
 Ընտիր հասակ, միատեսակ,
 Յեւ հետները քաջ, համարձակ,
 Սևածուր—քեռին նրանց,
 Այ քեզ հրաշք հետսված:—
 Յեւ հյուրերն են խելոք լուի,
 Չեն ել ուզում հակաճառել:

Զարմացել ե Սալթան արքան,
Կատաղում ե Գվիդոնն այն,
Մորաքրոջն ե հասնում տղղում
Յեւ ձախ աչքի վրա նստում:
Գուչնը կորցրեց ջուրհակունին,
Յեւ կուրացավ նույն վայրկյանին:
Շուրջը աղմուկ,—բռնիր, բռնիր...
Դե շուտ ճիւղիր, դրան սպանիր,
—Այ թե յես քեզ, սպասիր...—Նորից
Քաջ իշխանը պատուհանից
Թռավ հասավ յերկիրը իր,
Կապույտ ծովով անծայրածիր:
Ու իշխանը ծովի ափին
Ման ե գալիս տխուր կրկին:
Հանկարծ տեսավ, հոսող ջրում,
Այն կարապն ե ճերմակ լողում:
—Բարե՛, իշխան, չքնաղ ջահել,
Ինչո՞ւ դեմքիդ ամպ ե իջել,
Յեւ ինչո՞ւ լես տխուր այդպես:—
Նա Գվիդոնին հարցրեց այսպես:
Ու իշխանը պատասխանեց.
—Սիրտս ցավ ե կրծում մի մեծ,
Այն հրաշքը ճիանալի
Իմ յերկրում կուղեմ լինի:
—Ի՞նչ հրաշք ե զարմանալի:
—Անդ յուռչում ե փոթորկալի
Ովկիանը, ուժեղ վռնում,
Դատարկ ափի վրա ցատկում,
Տարածվում ե շառաչելով,
Յեւ մնում են ափին շուտով,

Պատյաններով բոցավառվող,
Յերեսուն յերեք կտրիճ քայլող,
Դյուցազներ են վողջը սիրուն:
Հսկաներ են ջահել, նախշուն:
Միահասակ,—նրանց կողքին,
Սեածովը՝ ծերուկ քեռին:
Յեվ կարապն ե պատասխանում.
—Ահա թե քեզ ինչն ե հուզում,
Մի մտածի, դու իմ հոգյակ,
Այդ հրաշքին յես եմ տեղյակ.
Դյուցազները—ծովի ազատ,
Յեղբայրներն են իմ հարազատ:
Գնահ, իշխան, ել մի տխրիլ,
Յեղբայրներիս քեզ մոտ սպասիր:

Յեվ իշխանը հանդարտ քայլեց,
Աշտարակի գլխին նստեց,
Ծովին սկսեց նայել անփութ...
Ծփաց հանկարծ ծովը կապույտ,
Աղմկելով նա տարածվեց,
Հասավ ափին, վրան թողեց
Յերեսուն յերեք կտրիճ քայլող,
Պատյաններով բոցավառվող:
Հսկաներն են զույգ-զույգ քայլում.
Յեվ ալեգարդ մազով փայլուն
Ծեր քեռին ե առաջնորդում,
Դեպի քաղաք նրանց տանում:
Քաջ Դավիդոնը իջավ, շտապեց,
Իր հյուրերին դիմավորեց:
Ժողովուրդն ե նույնպես վազում:

Իշխանին և քեռին ասում.
—Մեզ կարապն և այն ուղարկել,
Յեվ այսպես և խիստ հրամայել,
Պերճ քաղաքը քո պահպանել,
Շրջագայել մի լավ հսկել
Այսուհետև մենք ամեն ուր,
Միշտ միասին, ճամբուով սովոր,
Պարսպի մոտ, ծովի միջից,
Դուրս ենք գալու մենք ջրերից:
Կտեսնովենք մենք շատ շուտով,
Ժամն և ծովը իջնել խմբով.
Ծանր և ողբ մեզ յերկրի...
Յեվ տուն դարձան նրանք կրկին:

Ըղբոսնում և քաճին ծովում
Յեվ նավակն և առաջ քշում,
Նա վազում և ջրով յերեր,
Պարզած ճերմակ առագաստներ:
Անցնում կղզու ափից շատ մոտ,
Մեծ քաղաքի կողքով ծանոթ.
Թնդանոթն և սկսել կրակել,
Հրամայում և նավին կանգնել:
Յեվ հյուրերը կանգ են առնում,
Այն Գվիդոնն և նրանց կանչում,
Պատվիրում և հյուրասիրել,
Հետո իրեն պատասխանել.
—Ի՞նչ եք, հյուրեր իմ, դուք ծախում,
Դեպի ո՞ւր եք հիմա լողում:—
Նավորդները ի պատասխան.
—Մենք աշխարհը անցանք, տեսանք,
Յեվ ծախեցինք փայլուն պողպատ,

Դեղին վոսկի, մաքուր արծաթ.
Ժամանակն ե մեր լրացել,
Կուզենք հեռու ճամբա ընկնել,
Կղզու մոտով ալն Բուլանի,
Դեպ յերկիրը քաջ Սալթանի:
Ու իշխանը ասաց.—հիմա,
Ձեզ, պարոնայք, բարի ճամբա,
Ուղիանոսով, կապույտ ծովով,
Մինչ Սալթանը ձեր փառավոր:
—Քեզ, Դվիդոնը, ասեք նրան,
Բարեւում ե, զորեղ Սալթան...

Գլուխ տալով քաջ Դվիդոնին,
Նրանք ճամբա ընկան կրկին:
Իսկ իշխանը ափն ե վազում,
Ուր կարապն ե արդեն լողում,
Յեւ խնդրում ե՝ հոգիս նորից
Դեպի հեռուն ե ձգտում տնից:—
Ու կարապը նրան խելոյն
Ծովի ջրով ցողեց փայլուն:
Այստեղ նորից նա փոքրացավ,
Իշամեղու հանկարծ դարձավ,
Հետո թռավ և տղտղաց,
Նավին հասավ, իջավ նա ցած,
Նավախելի վրա նստեց
Յեւ ծակի մեջ նա թափնվեց:

Աղմկում ե ուրախ քամին,
Յեւ նավակն ե վազում կրկին,
Կղզու մոտով ալն Բուլանի,

Դեպ յերկիրը քաջ Սալթանի:
 Յեւ յերկիրը, այն յերազած՝
 Հեռուներում պարզ յերկաց:
 Ափն իջան հյուրերն այն,
 Հրավիրում ե նրանց արքան,
 Մինչև պալատ նրանց հետքով,
 Մեր կտրիճն ե թռչում ողով:
 Տեսավ, զուգված վսկով փայլուն,
 Սալթան արքան կը պալատում,
 Գահի վրա՝ թագը գլխին,
 Տխուր մի միտք իր ճակատին:
 Խոհարարը, ջուհակուհին,
 Կինարմատը՝ կին—խնամին,
 Թագավորի կողքին նստել,
 Յերեքովը չորս աչք ունեն:
 Յեւ հյուրասեր Սալթան արքան
 Հյուրերի հետ նստեց սեղան:
 Հարցրեց,—հյուրեր, իմ պարոնայք,
 Այդ վճռադից, ինչպես յեկաք,
 Ծովի այն կողմ լավ ե, թե՞ վատ,
 Յեւ ի՞նչ հրաշք տեսաք անհայտ:—
 Նավորդները ի պատասխան.
 —Մենք աշխարհի շուրջը անցանք,
 Վատ չե ծովի այն կողմ տեսանք,
 Իսկ աշխարհում—նոր մի հրաշք,
 Ծովում կզգի կա մեն-մենակ,
 Կղզու վրա մի մեծ քաղաք,
 Այնտեղ հրաշք դարմանալի,
 Ծովն ե ուռչում փոթորկալի,
 Յեւ ե գալիս, ուժեղ վռնում,

Դատարկ ամիս վրայ ցատկում
 Տարածվում ե շառաչելով,
 Յեւ մնում են ամիսն շուտով
 Յերեսուն յերեք կտրիճ քալող,
 Պատյաններով վռսկի—վառվող.
 Դյուցազներ են վողջը սիրուն,
 Հսկաներ են ջահել, նախշուն,
 Միահասակ,—նրանց կողքին,
 Սեածուլ՝ ծերուկ քեռին
 Դուրս ե գալիս ծովից յեռուն,
 Նրանց դույզ-դույզ ամիս ե բերում,
 Վոր պահպանեն նրանք կողին
 Յեւ շուրջ բոլոր հսկեն կարգին:
 Չկա այդպես վատահելի,
 Քաջ, ջանասեր զորք ամիսի
 Անդ Գվիդոնն ե տերը ջահել,
 Նա բարե ե քեզ ուղարկել:—
 Սալթան արքան շատ զարմացավ,
 —Թե կենդանի մնամ,—ասավ,
 Չքնաղ կողին յես կայցելեմ,
 Յեւ Գվիդոնին հյուր կլինեմ:—
 Խոհարարը, ջուլհակուհին,
 Վոչինչ չաւին,—իսկ խնամին
 Քմծիծաղով ասավ այսպես.
 —Չեք զարմացնի դրանով դուք մեզ,
 Վոր մարդիկ են ծովից յեկում
 Յեւ շուրջ բոլոր այնտեղ հսկում:
 Ծիշտ են ասում, թե սուտ խոսում,
 Այստեղ հրաշք յես չեմ տեսնում:
 Կա մի հրաշք մեր աշխարհում,

Ճիշտ լուրեր են միշտ պատվում:
 Ծովի ալն կողմ կա դշտունի,
 Աչքդ խակի, չես հեռացնի,
 Լույսն է որվա խավարեցնում,
 Նա գիշերն է լուսավորում:
 Ծամի տակին փայլուն լուսնյակ,
 Իսկ ճակատին ասող — արեգակ,
 Իրեն այնպես վեհ է պահում,
 Սիրամարգ է կարծես քաջլում:
 Իսկ ինչպես է ասում, խոսում,
 Դեռն է կարծես մեղմիկ հոսում:
 Կարելի չե ասել — հրաշք,
 Չտեսնված այ ձեզ զարմանք:
 Յեվ հյուրերն են խելոք լուր,
 Չեն ել ուզում հակաճառել:
 Չարմանում է արքան կրկին,
 Կատաղում է արքայորդին,
 Բայց խղճալով իր տատիկին,
 Ել չի նստում նրա աչքին,
 Այլ տղում է և պտավում,
 Բիթի վրա ուղիղ նստում,
 Բիթն է խայթում:— Մեկ ել ահա,
 Մի մեծ բշտիկ քթի վրա:
 Յեվ գոռում են վողջ ահաբեկ.
 — Ի սեր ասածո՞, շուտով ոգնե՞ք,
 — Հեյ, պահակներ, բռնե՞ք շուտով,
 Դե, ճիւղեցե՞ք դրան վտառով,
 — Ա՛յ քեզ, սպասիր:— Պատուհանից
 Իշամեղուն թռավ նորից,
 Իբր չերկիրը հասավ շուտով,

Գնաց, անցավ կապույտ ծովով:
 Ու իշխանը ծովի ամին
 Ման ե գալիս տխուր կրկին:
 Հանկարծ տեսավ, հոսող ջրում,
 Այն կարապն ե ճերմակ լողում:
 — Բարև, իշխան, չքնաղ, ջահել,
 Ինչո՞ւ դեմքիդ ամպ ե իջել,
 Յե՞վ ինչո՞ւ յես տխուր ալուպես,—
 Նա Գվիդոնին հարցրեց այսպես:
 Ու իշխանը պատասխանեց.
 — Միրոս ցավ ե կրծում մի մեծ,
 Վոր բոլորն են ամուսնանում,
 Յես եմ մենակ այսպես մնում: —
 — Իսկ դու գո՞ւց ե մեկին գիտես,—
 — Աշխարհումս կա մի այնպես,
 Արքայադուստր գեղեցկուհի,
 Վորից աչքդ չես հեռացնի,
 Լույսն ե որվա խավարեցնում,
 Յե՞վ գիշերն ե լուսավորում:
 Ծամի տակին փայլուն լուսնյակ,
 Իսկ ճակատին աստղ— արեգակ:
 Իրեն այնպես վե՛հ ե պահում,
 Միրամարդ ե կարծես քայլում:
 Իսկ ինչպես ե ասում, խոսում,
 Գետն ե կարծես մեղմիկ հոսում:
 — Այդ բոլորը ճի՞շտ ե, ասա,—
 Պատասխանին սպասում ե նա:
 Յե՞վ կարապն ե ճերմակ լո՞ւել,
 Հետո սկսեց այսպես խոսել.
 — Կա այդպիսի աղջիկ, իշխան

Բայց ձեռնոց չի կինը՝ նրան
 Ճերմակ ձեռքից դեն չեա գցի,
 Գոտու յետև խո չեա թագցնի:
 Կծառայեմ քեզ խորհուրդով:
 Լսիր, հասիր վողջին մտքով,
 Լավ խելք արա, իշխան, կրկին,
 Վոր չըզդճաս հետո իսկիւ—
 Յեւ իշխանը սկսեց յերգվել,
 Վոր ուզում է նա պսակվել,
 Վոր նա արդեն սրա մասին
 Մտածել է ճանապարհին,
 Վոր պատրաստ է նա մոլեղին,
 Այն դշխուհու համար անգին,
 Գնալ վոտքով, փնտռել հեռու,
 Յոթ սարերի յետևներում:
 Իսկ կարապը խոր ախ քաշեց.
 — Ինչո՞ւ հեռու—նրան ասեց,—
 — Գիտցիր, մոտ է բաղդդ այնքան,
 Այն դշխուհին յեա հմ, իշխան:—
 Նա թևերը թափահարեց.
 Ալիքների մոտով սահեց,
 Ափը իջավ վերից հան,
 Թփերի մեջ մտավ անահ.
 Թալրատով թափահարվեց,
 Յեւ դշխուհի դարձավ, փոխվեց.
 Ծամի տակին փայլուն լուսնյակ,
 Իսկ ճակատին աստղ—արեդակ:
 Իրեն այնպես վեհ է պահում,
 Սիրամարդ է կարծես քաջում:
 Իսկ ինչպես է ասում, խոսում,

Գեան ե կարծես մեղմիկ հոսում:
 Ու իշխանն ե նրան գրկում,
 Ճերմակ կրծքին ամուր սեղմում.
 Հետո ձեռքից նրա բռնում,
 Իր մայրիկի մոտ ե բերում,
 Յեւ վռտքերն ե ընկնում խնդրում,
 Աղաչելով հեզ՝ հնազանդ,
 —Դո՛ւ, ախրունի, մայր հալազատ,
 Կին եմ ընտրել յես ինձ համար,
 Քեզ ել՝ աղջիկ լսող հարմար:
 Մենք խնդրում ենք, վոր գու որհնիս,
 Յերկուսիս ել թույլ տաս զու մեզ,
 Ապրել սիրով և միասին,
 —Դե մեզ որհնի,—նրան ասին:
 Յեւ հնազանդ գլխի վրա
 Մըրապատկեր վերցրած ահա,
 Մայրն ե լալիս, ասում.—Վորդիք,
 Աստված կլանքում կվարձատրի—
 Քաջ իշխանը ել չսպասեց,
 Նա դժբաղձու հետ պսակվեց.
 Յեւ ապրեցին նրանք սիրով
 Նորածնի սպասելով:

Ըզրոսնում ե քամին ծովում,
 Յեւ նավակն ե առաջ քշում,
 Վոր վազում ե ջրով յերեւ,
 Բացած ճերմակ առաքատներ:
 Անցնում կղզու ափից շատ մոտ,
 Մեծ քաղաքի կողքով ծանոթ.
 Թնդանոթն ե սկսել կրակել,

Հրամայում ե նավին կանգնել:
 Յեվ հյուրերը կանգ են առնում,
 Այն Գվիդոնն ե նրանց կանչում,
 Պատվիրում ե հյուրասիրել,
 Հետո իրեն պատասխանել.
 — Ի՞նչ եք, հյուրեր իմ, դուք ծախում,
 Յեվ դեպի հւր հիմա լողում:
 Նավորդները ի պատասխան.
 — Մենք աշխարհը անցանք, տեսանք,
 Ուր ծախեցինք ամեն տեսակ
 Յեվ անքանակ անհայտ ապրանք:
 Ժամանակն ե մեր լրացել,
 Կուզենք հեռու ճամբա ընկնել
 Կզգու մոտով այն Բուլանի,
 Դեպ յերկիրը քաջ Սալթանի:
 Ու իշխանը ասաց. — Հիմա,
 Ձեզ, պարոնայք, բարի ճամբա,
 Ովկիանոսով, կապույտ ծովով,
 Մինչ Սալթանը ձեր փառավոր:
 Բայց հիշեցրեք նրան միայն,
 Թագավորին ձեր աննման,
 Խոստացել ե մեզ այցելել,
 Բայց մինչ ալժմ նա չի յեկել:
 Բարեկեցեք ինձնից նրան:—
 Յեվ հյուրերին այս մեկ անգամ
 Քաջ Գվիդոնը չհետևեց,
 Իր կնոջից չբաժանվեց:
 Աղմկում ե ուրախ քամին
 Յեվ նավակն ե վաղում կրկին,
 Կզգու մոտով այն Բուլանի,

Դեպ յերկիրը քաջ Սալթանի:
 Յեւ յերկիրը այն յերազած՝
 Հեռուներում պարզ յերեաց:
 Ափը իջան հյուրերն այն,
 Հրավիրում ե նրանց արքան:
 Տեսան, գուգված թագով փայլուն
 Սալթան արքան իր պալատում,
 Խոհարարն ել, ջուլհակուհին,
 Կինարմատը՝ կին—խնամին,
 Թագավորի կողքին նստել,
 Յերեքովը չորս աչք ունեն,
 Յեւ հյուրասեր Սալթան արքան
 Հյուրերի հետ նստեց սեղան:
 Հարցրեց—Հյուրեր, իմ պարոնայք,
 Այդ վիրտեղից՝ ի՞նչպես յեկաք:
 Ծովի այն կողմ լսվ ե, թե՞ վատ,
 Յեւ ի՞նչ հրաշք տեսաք անհայտ:—
 Նավորդները ի պատասխան.
 —Մենք աշխարհի շուրջը անցանք,
 Վատ չե ծովի այն կողմ տեսանք,
 Իսկ աշխարհում նոր մի հրաշք՝
 Ծովում կղզի կա մեն-մենակ,
 Կղզու վրա մի մեծ քաղաք,
 Վոսկեզմբեթ յեկեղեցի:
 Յեւ ալգիներ շատ գեղեցիկ:
 Պալատի դեմ յեղենու ծառ,
 Տակը բյուրեղ տնակ պայծառ,
 Մեջը սկզուռ մի ընտանի,
 Յեւ սրամիտ, և՛ կենդանի:
 Նա յերգեր ե սիրուն ասում

Յեւ կաղին ե անկերջ կրծում:
 Իսկ կաղինը չե հաւարակ,
 Վողջ կճեպը՝ վոսկի բարակ,
 Իսկ միջուկը—զմրուխտ կանաչ,
 Յեւ ծառաներ նրա առաջ:
 Ուրիշ հրաշք զարմանալի՝
 Անդ ուռչում ե փոթորկալի,
 Յեռ ե դալիս ծովը, վոռնում,
 Դատարկ ափի վրա ցատկում,
 Տարածվում ե արագ վազքով,
 Յեւ մնում են ափին շուտով,
 Պատյաններով բոցավառվող,
 Յերեսուն յերեք կտրիճ քայլող,
 Դյուցազներ են նրանք սիրուն,
 Հսկաներ են ջահել, նախշուն,
 Միահասակ,—նրանց կողքին
 Սևածովը՝ ծերուկ քճոխ:
 Զկա ալդպես վստահելի,
 Քաջ, ջանասեր զորք ավելի,
 Իսկ իշխանը մի կին ունի,
 Աչքդ իսկի չես հեռացնի:
 Լույսն ե որվա խավարեցնում,
 Նա գշերն ե լուսավորում,
 Ծամի տակին փայլուն լուսնյակ,
 Իսկ ճակատին աստղ—արեգակ:
 Անդ Դվիդոնն ե տերը ջահել,
 Մեծարում են նրան վայել:
 Ուղարկում ե նա քեզ ըսրկ,
 Նախատում ե նա քեզ թեթև,
 —Խոստացել ե մեզ ալցելի,

Բայց դեռ ձեզ մոտ նա չի չեկել՝—
 Արքան այստեղ չհամբերեց,
 Նավատորմը իր պատրաստեց:
 Խոհարարն ել, ջուրհակուհին,
 Կինարմատը՝ կին—խնամին
 Չեն կամենում նրան թողնել,
 Չքնաղ կղզին այն այցելել:
 Սալթան արքան ուշ չի դարձնում
 Յեվ ալսպես ե նրաց զսպում.
 —Յես արքա յեմ, թե յերեխա,—
 Նա ասում ե լուրջ ու վստահ.
 —Յես մեկնում եմ.—վոտքով գոփեց,
 Յեվ դուրս յեկավ, դուռը խփեց:

Քաջ Գլխոտնն ե տանը նստել,
 Ըսկսել ե ծովին նայել,
 Վոր հանդարտ ե ե չի հուզվում,
 Թփրտում ե, մեղմիկ ծփում:
 Իսկ լազուրե հեռուներում
 Մեծ նավատորմ ե յերևում.
 Ովկիանոսում նավեր քանի,
 Նավատորմն ե այդ Սալթանի:
 Յեվ Գլխոտնը տեղից թռավ,
 Բարձր ձայնով կանչեց ասավ.
 —Մայր հարազատ, դու իմ անել,
 Իշխանուհի դու ել ջահել,
 Շուտով նայեք, տեսեք այնտեղ,
 Իմ հալըիկն ե գալիս այստեղ:—
 Նավատորմն ձոտ ե կղզուն
 Նա դիտակով հորն ե նայում:


Հայրն ե կանգնել նավին ահա,
Յեւ նայում ե իրենց վրա.
Հետն են յեկել ջուհակուհին,
Խոհարարը ե խնամին:
Յեւ ըտտրն են շատ դարձանում,
Յերբ յերկիրն են անհայտ տեսնում:
Կրակում են թնդանոթից,
Զիլ դողանջներ դանգատունից:
Քաչ Գվիգոնը ասին ե իջնում
Յեւ արքային զմաւորում,
Հետը յեկած ջուհակուհուն,
Խոհարարին ե խնամուն:
Քաղաք տարավ նա արքային
Յեւ չխոսեց ամենեկին:

Դեպ պալատ են նրանք դիմում:
Դարպասի մոտ զրահով փալլուն:
Արքայի գեմ, քաջ, անվներ,
Յերեսուն չեքեք հրաշք գյուցադներ:
Կարիճներ են վողջը սիրուն,
Հսկաներ են ջահել նախշուն:
Միահասակ.—նրանց կողքին
Սևածովը՝ ձերուկ քեռին:
Յերբ լաջն բակը արքան մտավ,
Մեծ յեղենի այնտեղ տեսավ,
Տակը սկյուռն յերգ ե ասում
Յեւ կադին ե վոսկի կրծում.
Միջից կանաչ գմբուխտ հանում,
Պարկի մեջ ե ալն հավաքում:
Յեւ շուրջ ըտտր այն մեծ բակում:

Թափած կճեպ լոսկի, փայլուն:
 Մեկ եւ հանկարծ ուրիշ հրաշք,
 Իշխանուհի իսկ մի զարմանք,
 Ծամի տակին փայլուն լուսնյակ,
 Իսկ ճակատին տոտղ—արեգակ:
 Իրեն այնպես զեհ ե պահում,
 Սիրամարգ ե կարծես քայլում.
 Սկեսուրին ե առաջնորդում,
 Ձեռքից բռնած սենյակ բերում:
 Ճանաչում ե նրան արքան,
 Բարախում ե սիրտն արագ,
 — Ի՞նչ եմ տեսնում, այ քեզ զարմանք.
 — Ի՞նչպես, — շունչն ե հագիւ պահում,
 Լաց ե լինում ե արտասուում,
 Թաղուհուն ե սեղմում կրծքին,
 Կարգաւ չեա ել չանել չարսին:
 Յերբ նստեցին սեղան մեկտեղ,
 Սկզկից մի քեֆ ուրախ աչնաւդ,
 Խոհարարն ել, ջուլհակուհին,
 Կինարմատը՝ կին — խնամին
 Թաղնիլ են անկյուններում,
 Հաղիւ գտան նրանց միմեկում:
 Այտեղ նրանք թուրն ապին
 Յեւ լաց յեղան, մեղանչեցին:
 Իաց այս անգամ ուրախ արքան
 Նրանց թողեց, վոր տուն դառնան:
 Որը անցաւ — և Սալթանին
 Կիսահարբած քնացրեցին:
 Այնտեղ չես ել շատ խմեցի,
 Միայն բեխս թաթախեցի:

ՀԵՐԹՈՒԹՅԱՆ ԶԿՆԱԲԱՐՍԻ ՕՐԿՈՒՄ, ԶԿՆԱԲԱՐՍԻ ՄԱՍԻՆ

1833



Մի ծերուկ ձկնորս և կինը պատալ
 Բնակվում էին կապուշտ ծովի մոտ.
 Այսպես հողաշեն մի հին տնակում
 Յերեսուն-յերեք տարի ապրեցին:
 Ծերուկը ցանցով միշտ ձուկ էր բռնում,
 Պառաֆն էլ նստած էր թեկն եր մանում:
 Ծերուկը մի որ ծովը ցանց ձգեց,
 Յանցը դուրս յեկավ, լեփ լեցուն աիդմով-
 նա ցանցը մեկ էլ ծովի մեջ ձգեց,
 Յանցը դուրս յեկավ ծովային խոտով.
 Նա յերրորդ անգամ ցանցը ծով ձգեց,
 Յանցը ափ հանեց մի փոքրիկ ձկնիկ.
 Վոչ թե հաւարակ, այլ վոսկի ձկնիկ:
 Ձկնիկը վոսկի սկսեց խոսել,
 Մարդկային լեզվով այսպես աղերսել—
 —Թող, դու ալևոր, ինձ ծովը նորից,
 Թանկագին փրկանք քեզ կվճարեմ,
 Ինչ սիրտդ ուզի, կտամ փոխարեն:
 Ծերը զարմացավ, սաստիկ վախեցավ,
 Յեռեսուն-յերեք նա տարվա ձկնորս,
 Չեր լսել յերեք, վո՞ր ձուկը խոսի.
 Յեվ նա աղատեց վոսկի ձկնիկին,
 Յեվ հետը խոսեց այսպես սիրալիբ—
 —Տեր աստված քեզ հետ, իմ վոսկի ձկնիկ,
 Բո փրկանքն ինձ խեղի պետք էլ չի,

Գնա քեզ համար դու ծովը կապույտ,
Զրեբում լողա ազատ և անփութթ,

Ծերը տուն դարձավ պառավ կնոջ մոտ:
Հրաշքի մասին պատմեց պառավին,
— Այսօր վորսացի յես փոքրիկ ձկնիկ,
Վոչ թե հասարակ, այլ վոսկի ձկնիկ,
Ուղիղ մեր լեզվով ձկնիկն եր խոսում,
Նա խնդրում եր ինձ թողնեմ կապույտ ծով,
Խոստանում եր ինձ թանկագին փրկանք,
Ինչ սիրտս ուղի տալիս փոխաբեն:
Նրանից փրկանք յես չվերցրեցի
Յեվ այնպես թողի նրան կապույտ ծով: —
Ծերուկի վրա պառավը դռաց—
— Դու հիմար, անմիտ, ծերուկ քավթառած,
Ծնոր՞ք չունեցար փրկանք խնդրելու,
Գոհե մի տաշտակ խնդրելիք, վոր տա,
Մեր տաշտակը հին ճեղքվել և վաղուց:

Ծերուկը գնաց դեպ ծովը կապույտ,
Տեսավ, ծովը նա ծփում և մեղմիկ,
Ըսկսեց կանչել վոսկի ձկնիկին,
Զուկը դուրս լողաց, հարցրեց ծերուկին.
— Ի՞նչ և հարկավոր, քեզ, իմ ալվոր,
Նա գլուխ տվեց և պատասխանեց.
— Վողորմած յեղիր, թափուհի ձկնիկ,
Հայհոյում ե ինձ կինս իմ պառավ,
Հանգիստ չի տալիս խեղճ ալեորիս,
Նոր տաշտակ ե պետք, ասում ե նա ինձ,
Մեր տաշտակը հին ճեղքվել և վաղուց:
Յեվ պատասխանեց ձկնիկը վոսկի—

—Տե՛ր աստված քեզ հետ, մի տխրի, գնա, 1
Այսոր դուք մի նոր տաշտակ կունենաք:

Ծերը տուն դարձաւ պառաւ կնոջ մօտ,
Պառաւի առաջ—նոր փայտե տաշտակ.
Բայց նա սկսեց ել ամեղի գոռալ—
—Դու հիմար, անմիտ, ծերուկ քալթառած,
Գնացիր, անխելք, խնդրեցիր տաշտակ,
Ի՞նչ ոգուտ, ի՞նչ շահ տաշտակից դատարկ,
Դե գնա, հիմար, նորից ձկան մօտ
Գլուխ տուր նրան և խրճիթ խնդրիր:

Ծերուկը գնաց դեպ ծովը կապույտ,
(Պղտորված տեսաւ նա ծովը կապույտ).
Սկսեց կանչել վոսկի ձկնիկին,
Ձուկը դուրս լողաց հարցրեց ծերուկին—
—Ի՞նչ ե հարկավոր, քեզ, իմ ալևոր,
Նա գլուխ տվաւ և պատասխանեց—
—Վաղորմած չեղիր, թագուհի ձկնիկ,
Հախոյում ե ինձ կինս ավելի,
Հանգիստ չի տալիս խեղճ ալևորիս,
Խրճիթ ե ուզում կինը կովարար:—
Յեւ պատասխանեց ձկնիկը վոսկի—
—Թող այդպէս լինի, խրճիթ կունենաք:

Ծերը յետ դարձաւ դեպի տունը հին,
Տունը հողաշեն ել նա չգտաւ.
Դեմը մի խրճիթ վերնասենյակով
Յեւ աղյուսաշար լայն ձխնելուցով:
Նա ուներ կաղնու տախտակից դարպաս:

Պատուհանի տակ պառաֆն եր նստել,
 Նա ծերին նորից անիծեց սաստիկ—
 —Իու անմիտ քալթառ, իսկական ապուշ,
 Գնացիր, ապուշ, խնդրեցիր խրճիթ,
 Յետ դարձիր, գնա, գլուխ տուր ձկնիկին,
 Ասա, չեմ ուզում գեղջկուհի մնալ,
 Ուզում եմ աղնիվ յես տիկին գառնալ:
 Երբեք քնաց դեպ ծովը կապույտ,
 (Սնանդիրսս դառալ նա ծովը կապույտ):
 Ըսեսեց կանչել վոսկի ձկնիկին,
 Զուկը դուրս լողաց հարցրեց ծերուկին—
 —Ի՞նչ ե հարկավոր քեզ, իմ ալեվոր,
 Նա գլուխ տվավ և պատասխանեց—
 —Վողորձած չեղիր, թաղուհի ձկնիկ,
 Կատաղել ե չար կինս ավելի,
 Հանգիստ չի տալիս խեղճ ալեվորիս,
 Ել նա չի ուզում գեղջկուհի մնալ,
 Ուզում ե աղնիվ նա տիկին գառնալ:
 Յեղ պատասխանեց ձկնիկը վոսկի—
 —Տեր աստված քեզ հետ, մի տխրի, գնա:

Ծերը սուհն դարձավ պառաֆ կնոջ մոտ:
 Այս ինչ ե տեսնում.— բարձրաբերձ մի տուն.
 Սանդուխքի գլխին իր կինը պառավ,
 Վրան սամուրե տաքուկ քաթիրա,
 Գլխին դիպակե վոսկեթել գլխարկ,
 Վզին շարե-շար փայլուն մարգարիտ,
 Մատներին վոսկի մատնիքներ անդին,
 Վոտքերին կոշիկ կաս—կարմիր կաշվից:
 Մոտը ծառաներ հլու—հպատակ,

Ծեծում ե նրանց, նա մազից քաշում,
Ասում ե ծերը իր պառավ կնոջ.
— Բարև քեզ, խանում, տիկին իմ ազնիվ,
Դձհ ես խոմ հիմա, հոգիդ ե հանգիստ,
Բայց վրան գողաց իր կինը պառավ,
Ուղարկեց ախոռ, ծառայի իրեն:

Իհե՛յ յերկու շաբաթ անցկացավ, գնաց:

Պառավը նորից կատաղեց սաստիկ.

Ծերուկին ելի քշեց ձկան մոտ.

— Յետ դարձիր, գնա, գլուխ տուր ձկնիկին,

Ջեմ ուղում լինել յես ազնիվ տիկին,

Ուղում եմ լինել ազատ թագուհի —

Ծերը վախեցավ, աղաչեց նրան,

— Քեզ լինչ պատահեց, գժվել ես գուցե,

Շեն-շնորհք չունես, վոչ խոսել գիտես,

Վողջ յերկիրը դու կծիծաղացնես:—

Բարկացավ ավել կինը այն պառավ,

Ամուսնու այտին հասցրեց մի ապտակ.

— Ինչպես ես, գեղջուկ, հանդգնում, անգետ,

Վիձել ինձ նման ազնիվ տիկնոջ հետ,

Դու ծովափ գնա, ասում եմ պատվով,

Թե վոր չգնաս, քարշ կտան զոռով:

Ծերուկը նորից ծովի ավ գնաց,

(Ծովը այն կապույտ տեսավ սևացած).

Ըսկեսց կանչել վոսկի ձկնիկին,

Ձուկը դուրս լողաց, հարցրեց ծերուկին—

— Ի՞նչ ե հարկավոր, քեզ իմ ալիվոր,—

Նա գլուխ տվավ և պատասխանեց—


—Վողորմած յեղիւր, Թագուհի ձկնիկ,
Կովում ե դարձյալ կինը իմ պառաւ,
Զի ուզում լինել ել ազնիւ տիկին,
Ուզում ե լինել ազատ Թագուհի:
Յեւ պատասխանեց ձկնիկը վոսկի —
—Տեր աստված քեզ հետ, մի տխրի, գնա,
Թող կինդ ազատ Թագուհի դառնա:

Ծերունին նորից կնոջ մոտ յեկավ,
Դեմը ապարանք, պերճ, արքայական,
Պալատում տեսաւ նա իր պառաւին,
Սեղան եր նստել, դառած Թագուհի:
Ծառայում եյին իշխաններ ազնիւ,
Նրան զինիով պատվում Թանկագին,
Մեղրաբլիտ եր նա ուտում քաղցրահամ.
Նրա շուրջ բոլոր ահեղ պահազորք,
Ուսերին փոքրիկ կացիններ սրած:
Ծերը վոր տեսաւ, վախեցաւ սաստիկ,
Խոնարհվեց, ընկաւ վոտքերը պառաւին,
Ասաւ,—Վողջ յեղիւր, հզոր Թագուհի,
Գոհ ես խոմ հիմա, հանգիստ ե հոգիդ:
Նրան չնայեց պառաւը իսկի,
Հրամայեց նրան վռնգել հեռու:
Առաջ վազեցին իշխաններն ազնիւ,
Խփեցին մեջքին և վզակոթին,
Դռներում նրան պահազորքն աչն
Ուզեց կտրատել սուր կացիններով,
Ամբոխը դրսում վրան ծիծաղեց—
—Տեղն ե քեզ, անտաշ և հիմար,—ասեց,
—Քեզ համար, անտաշ, թող խրատ լինի,
Վերմակիդ չափով վոտքերդ մեկնի:

Մեկ-յերկու շաբաթ անցկացաւ գնաց,
Պառաւ Նորից կատաղեց սաստիկ,
Ուղարկում ե նա իր իշխաններին,
Վոր գտնեն, բերեն իր մոտ ծերուկին.
Յերբ գտան բերին, նա ասաց ծերին—
— Յետ դարձիր, գնա, գլուխ տուր ձկնիկին,
Ջամ ուղում, ասա, լինել թագունի,
Ուղում եմ դառնալ ծովի տիրունի,
Ուկիան—ծովում ապրել եմ ուղում,
Վոր ինձ ծառայի ձկնիկը վոսկի,
Ուր վոր ուղարկեմ, նա իսկույն լսի:
Ծերուկը նրան չհակաճառեց,
Յեւ վոչ մի տրտունջ չհայտնեց իսկի.
Նորից նա դիմեց դեպ ծովը կապույտ:
Փոթորկվել եր խիստ, ծովը սևացել,
Ալիքներն եյին ուռել և փքվել,
Փրփրում եյին և վոռնում գաժան:
Նա կանչեց դարձյալ վոսկի ձկնիկին,
Ջուկը դուրս լողաց, հարցրեց ծերուկին—
— Ի՞նչ ե հարկավոր, քեզ իմ ալեւոր, —
Նա գլուխ տվաւ և պատասխանեց—
Վողորմած չեղիր, թագունի ձկնիկ,
Ինչ անեմ յես այդ նզովյալի հետ,
Ել չի կամենում լինել թագունի,
Ուղում ե դառնալ ծովի տիրունի,
ւղում ե ապրել Ուկիան—ծովում,
Վոր դու ել նրան լսես, ծառայես,
Ուր վոր ուղարկի, իսկույն կատարես:
Ել վոչինչ չասաց ձուկը ծերուկին,
Ջուկը նա միայն ճողփեց իր պոչով,

Ու գնաց, սուղիկեց խորքերը ծովի:
Ծերուկը յերկար մնաց ծովափին,
Բայց չարժանացաւ նա պատասխանի:
Ծերունին քայլեց, յեկաւ կնոջ մոտ,
Դիմացը դարձյալ տունն հր հողաշեն,
Տեսաւ նա շեմքին պառաւին նստած,
Առաջն ել կոտրած տաշտակն եր ընկած:

ՀԵՐՇԵԼԻ ԳՈՍԵՏ ԱՊՐԵՐԻԼԻ ՄԱՍԻՆ
1832



Այնտեղ անհայտ մի աշխարհում,
 Յոթը սարից այն կողմ, հեռու,
 Կար Դադոնը՝ մի թաղավոր,
 Զահել որից միշտ փառավոր:
 Հարեւանին իր շատ հաճախ
 Նեղացնում եր նա քաջ, անվախ,
 Բայց ձերության իր որերին
 Վերջ տալ ուզեց նա մարտերին,
 Ապրել ուզեց խաղաղ կյանքով:
 Բայց հենց այստեղ դրացիք խռով
 Շատ նեղեցին թաղավորին՝
 Նրան սաստիկ ֆեառ բերին,
 Սահմանները իր տերության
 Ուզեց պահել նա անսասան,
 Դրա համար նրան այստեղ
 Պետք եր մի մեծ բանակ ահեղ:
 Զորավարներ կային անքուն՝
 Բայց թշնամուն չեցին հասնում:
 Սպասեցին թե հաբավից,
 Զորք եր թափվում արևելքից.
 Վերջ կտային նրան այստեղ,
 Ծովից կգար հյուրը ահեղ:
 Քիչ եր ֆեռում նա լաց լիներ,
 Դադոն արքան քունը կորցնեւ.
 Եւ իհնչ կյանք կար նրա համար, —

Յեւ ռդնուծյան համար ահա
 Նա դիմում ե մի իմաստուն
 Աստղագուշակ ծեր ներքինուն:
 Սուրհանդակն ե նրան կանչում
 Դադոնի մոտ: Յեւ իմաստուն
 Ծերն ե դալիս, միջից պարկի
 Մի աքաղաղ հանում վոսկի:
 — Դու նստացրու այս թռչունին, —
 Դիմեց այսպես նա արքային,
 Զողի վրա ե կդառնա,
 Նա քեզ համար պահակ անձան:
 Թե վոր շուրջը խաղաղ լինի՝
 Սա ել հանգիստ, լուռ կընստի,
 Բայց թե դոսի կողմից սկսված
 Քո դեմ կոիվ լինի հանկարծ,
 Կամ ռազմական ուժ հարձակվի,
 Կամ մի ուրիշ փորձանք լինի՝
 Իմ աքլորը այն վայրկյանին
 Իր կատարը կբարձրացնի,
 Զիլ կը կանչի, կը թփրտա,
 Ու նույն կողմը նա շուռ կդա: —
 Յեւ շնորհակալ յեղով արքան,
 Յեւ խոստացավ վոսկի նրան:
 — Յես փոխարեն այս լավուծյան, —
 Դոչեց արքան դոհ, բարձրաձայն,
 — Քո առաջին կամքը — հրաման
 Կը կատարեմ իմի նձան:

Յեւ աքլորը նստած ձողին,
 Սկսեց հսկել սահմաններին:

Թե սպառնար վտանգ հանկարծ,
 Հավատարիմ պահակ դառած,
 Նա կը շարժվեր, կը թփրտար,
 Հենց այն կողմը նա շուռ կգար,
 Յեւ կը գոռար—կի՛ր ըի-կո՛ւ-կո՛ւ,
 Դեհ, վայելիր հանդիստ դու քուն:
 Դրացիները հանգստացան,
 Չեն հարձակվում արդեն նրանք:
 Դադոն արքան ահ ներշնչեց
 Ամեն կողմից նրանց ճնշեց:
 Տարիք անցան խաղաղ, անպարտ,
 Յեւ աքլորն է նստած հանդարտ:
 Մի որ հանկարծ մեծ աղմուկից
 Դադոն արքան զարթնեց քնից:
 —Ժողովողքի հայր—թագավոր,
 Զորավարը գոչեց հզոր,
 —Տեր, արթնացիր. աղետ է մեծ.
 —Իմ պարոնայք, ի՞նչ պատահեց:—
 Հարցրեց արքան հորանջելով.
 —Եւ ի՞նչ յեղավ, եղ հօ՛ւ ե, հօ՛ւ:
 —Աքաղաղը նորից կանչեց,—
 Զորավարը պատասխանեց.
 Վողջ քաղաքում աղմուկ է ահ
 Արքան տեսավ ձողի վրա
 Իր օքլորն է հա թփրտում,
 Դեպ արևելք անվերջ նայում:
 —Ուշացնելու կարիք չկա,
 —Հե՛յ ժողովուրդ, ձիւնց վրա...
 Նա արևելք դուրք ուղարկեց,
 Ավագ լորդին առաջնորդեց:

Յեւ աքլորը հանգստացավ,
Արքան նորից խոր քուն մտավ:

Ութ որ անցավ, իսկ այն զորքից
Լուր չեր գալիս վոչ մի կողմից,
Յեւ կռվում են, թե չեն կռվում,
Ծեր Դադոնին չեն հազորդում:

Յեւ աքլորը նորից կանչեց.

Արքան ելի զորք հավաքեց.

Յեւ այս անգամ կըրտսեր վորդին
Ուղարկվում և փրկել մեծին:

Աքաղաղը լռեց նորից,

Բայց լուր չկա վոչ մի կողմից:

Անցավ գնաց ութ որ կրկին

Վախը պատեց մարդկանց հոգին:

Աքաղաղը նորից կանչեց.

Յերրորդ անգամ զորք հավաքվեց,

Դեպ արեւելք արքան նրանց

Ինքը տարավ տարակուսած,

Զորքն և գնում որ ու գիշեր,

Վոչ վոք իր մեջ ել ուժ չուներ:

Արյան դաշտի, իջևանի,

Վոչ բարձրացող գերեզմանի—

Դադոն արքան չհանդիպեց:

—Ա՛յ քեզ հրաշք, նա մտածեց:

Յերը ութերորդ որը անցավ,

Բարձր սարեր արքան տեսավ,

Իսկ արանքում ահա պայծառ

Մի մետաքսե մեծ տաղավար:

Յեվ սքանչելի այնտեղ անդորր...
 Իսկ նեղ կիրճում և շուրջ բոլոր
 Զորք եր ջարդված, թափված մնում:
 Դեպ վրանն և արքան դիմում:
 Ինչ սոսկալի, գա՛րշ տեսարան...
 Նրա առաջ յերկու—տղան,
 Անսաղավարտ և անզրահ,
 Անկենդան են ընկած ահա,
 Զույգ սրերը իրար խրած,
 Իսկ ձիերը, մարգում անսանձ,
 Թափառում են այն վտոնահար
 Յեվ արյունոտ խոտի վրա:
 —Ո՛հ, վորդինե՛ր,—լացեց արքան.
 —Ավա՛ղ, ավա՛ղ, ցանցն ընկան
 Իմ զույգ բաղեն արադաթեմ,
 Ավա՛ղ մոտ և մահը իմ սե...
 Յեվ բոլորը լացին մեկտեղ,
 Յեվ դղրդաց, —տնքաց անեղ.
 Զորի խորքը, սիրտը սարի,
 Բացվեց փեշը տաղավարի,
 Շեմքին աղջիկ՝ մի դիցունի,
 Շամախանի պերճ թագունին.
 Արշալույսի նման փայլեց
 Յեվ արքային լուռ վողջունեց:
 Արևի դեմ—ինչպես մի բու,
 Լոեց արքան արյունարբու,
 Նայեց նրան և մոռացավ
 Մահը վորդոց և ամեն ցավ:
 Իսկ նա ժպտաց ծեր Դադոնին,
 Յեվ խոնարհվեց միջև գետին,

Ձեռքը հետո զգուշ բռնեց,
Իր վրանը նրան բերեց:
Հյուրասիրեց նրան սիրով,
Ամեն տեսակ բարիքներով.
Յեւ վնասցրեց նա արքային,
Տակը փռեց խառ անկողին:
Աճրողջ չոթ ուր անցավ, գնաց.
Նստած խոնարհ նրա դիմաց,
Դադոն արքան քեֆ եր անում,
Յեւ կախարդված նրան նայում:

Վերադարձի ճամբեն արքան
Իր վողջ ուժի հետ մարտական,
Յեւ աղջկա հետ այն ջահել.
Նա վազուց եր արդեն բռնել...
Նրա առաջ լուրն եր վազում,
Յեւ զած, չեղած բաներ պատմում.
Յեւ քաղաքի դարպասներում
Ժողովուրդն ե դիմավորում,
Հետեւելով ձիակառքին,
Պերճ թագուհուն և Դադոնին:
Վողջունում ե արքան նրանց,
Ու նրանց մեջ տեսնում հանկարծ,
Սարակինյան գլխարկ հագած,
Կարապի պես վողջ ճերմակած,
Հին բաեկամ իր նիբքինուն:
— Միշտ վողջ յեղիր, հա՛յր խմաստուն, —
Դիմեց արքան, — ասա, խոսի՛ր,
Դե, մոտ արի և հրամայիր:
— Արքա, — ասավ ծեր ներքինին,

—Ժամն ե մաքրել հաշիվը հին,
 Հիշիր, խոսք ես տվել ինձ դու՝
 Լավությունս վարձատրելու,
 Յեւ անաջին կամքս—հրաման
 Կատարելու քոնի նման,
 Ինձ նվիրիր այդ դիցունուն՝
 Շամախանի պերճ թագունուն:
 Թագավորը շատ զարմացավ,
 —Քեզ ի՞նչ յեղավ,—նրան ասավ,
 —Թե սատանա մեջդ մտավ,
 Կամ թե խելքդ գուցե թռավ,
 Յեւ ի՞նչ մտքրիր գլուխդ ալդպես.
 Խոստացել եմ, ճիշտ ե, յես քեզ,
 Ամեն ինչին չեմ, սահման կա,
 Դու պետք չունես այս աղջկա
 Յեւ լավ գիտես, թե ով եմ յես,
 Խնդրիր ինձնից ինչ վոր ուզես,
 Իշխանություն, կամ գանձ ե փող
 Իմ ախոսից ձի արշավող,
 Կեսը խնդրի իմ յերկրի...
 —Վոչինչ քեզնից յես չեմ ուզի,
 Ինձ նվիրիր այդ դիցունուն
 Շամախանի պերճ թագունուն:
 Ասաց ծերը ի պատասխան.
 —Թ՛քեց արքան,—տեսեք սրան:
 Ինձնից վոչինչ չես ստանա,
 Քանի վողջ ես, կորի, գնա,
 Զուր մի տանջի դու քո հողին,
 Դե, հեռացրեք այս ծերուկին:
 Ծերը ուզեց ասել, վիճել,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	62
Հեքյաթ թագավոր Սալթանի մասին	7
Հեքյաթ ձկնորսի և ձկնիկի մասին	43
Հեքյաթ վոսիկ աքլորիկի մասին	53



Արքաների հետ լավ չե կովել:
Գավաղանով արքան խփեց,
Լաչն ճակատին. ծերր փռվեց,
Շունչը փչեց:—Յնցվեց ճողոր
Վողջ քաղաքը:—Աղջիկն եր վոր,
Մեկ—հի, հի, հի, մեկ—հա, հա, հա,
Մեղքից կարծես չեր վախուժ նա:
Թեպետ արքան շատ եր հուզված,
Բայց աղջկան նա մեղմ ժպտաց,
Բաղաք մտավ գորքի հետ հոծ,
Մեկ եւ լավեց թեթեւ զնգոց,
Վողջ քաղաքը հանկարծ տեսավ,
Վոր աքլորը ձողից թռավ,
Ջրակառքին հասավ, թառեց,
Յեւ արքայի գլխին նստեց,
Կացահարեց, խփեց գլխին,
Ու վեր ճախրեց... հույն վաչրկյանին
Դադոն արքան կառքից ընկավ,
Սոր ախ քաշեց, հետո մեռավ,
Թագունին եւ կորավ հանկարծ,
Կարծես վռչինչ չեր պատահած...
Հեքյաթը սուտ, բայց ակնարկող,
Ձահեկներին լավ դաս տվող:

Քաղ. Հո. Գողոսյան
 Անվանաթերթը՝ Արարատ Ղարիբյանի
 Տեխ. խմբագիր՝ Լ. Ռնանյան
 Մեքագրիչներ՝ Հ. Մանուկյան, Հ. Դուրխանյան




1407

1940 I.

Գլավիլիաի լիազոր Կ-4480, Հրաա. 3685, Տիրաժ 3000, Գառվեր 121

Գետերաւի տպարան, Յերեւան, II Կնուէյանցի, № 4



1000.9

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037875

250

TRUE 34. 804.
TRUE 10. 804.

